# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2024թ. ապրիլի 22-ից 30-ը ք. Բրյուսել (Բելգիայի Թագավորություն) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Սոսե Ստեփանյան - ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 2024թ. ապրիլի 22-ից 30-ը

**3. Հրավիրող կողմը՝**

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Համաշխարհային մաքսային կազմակերպության մշտապես գործող տեխնիկական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 243/244-րդ նստաշրջանների ընթացքում ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության պետը ներկա է գտնվել Կոմիտեի օրակարգում ներառված հարցերի քննարկումներին, որոնք ենթակա են Կոմիտեի հավանության արժանացմանը: Նստաշրջանին չմասնակցելու դեպքում հնարավորություն չէր ընձեռնվի համագործակցել ՀՄԿ անդամ պետությունների հետ, մասնակցել քննարկվելիք հարցերին, նաև ՀՀ-ն չէր մասնակցի տեխնիկական կոմիտեի որոշումների ընդունմանը: Ընդ որում, տեխնիկական կոմիտեում որոշումները կայացվում են կոնսենսուսի միջոցով, և ՀՄԿ-ի ընդհանուր քաղաքականության ուղղությունների մասով անդամ պետությունների, այդ թվում՝ ՀՀ-ի արտահայտած դիրքորոշումները հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ: Մշտական տեխնիկական կոմիտեն գործում է ՀՄԿ խորհրդի և քաղաքականության հարցերով հանձնաժողովի ենթակայությամբ և կոմիտեի կայացրած որոշումների արդյունքներով ձևավորվում են վերոնշյալ մարմինների կողմից քննարկման ենթակա հարցերի օրակարգերը: Կոմիտեի հիմնական առաքելությունը մաքսային գործի ոլորտում տարբեր ստանդարտների ու

գործիքների մշակման և (կամ) փոփոխությունների մասով առաջարկությունների ներկայացումն է ՀՄԿ խորհրդին, որն էլ ընդունում է վերջնական որոշումներ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասով:

Ս. թ. ապրիլի 29-ին կայացել է Եվրոպայի տարածաշրջանի մաքսային ղեկավարների համաժողովը, որի ընթացքում մաքսային ծառայությունների ղեկավարների կողմից քննարկվել են տարածաշրջանային աշխատանքները, համաձայնություններ ձեռք բերվել հետագա աշխատանքների շուրջ:

**5. Քննարկված թեմաները՝**

Նիստի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Առևտրի դյուրացման համաձայնագրի (TFA), Համաշխարհային առևտրի աջակցության հարթակի, Միջսահմանային էլեկտրոնային առևտրի ստանդարտների համակարգի, Լիազորված տնտեսական օպերատորների շրջանակի ընդլայնման, «Ազգային մեկ պատուհան» համակարգի, Էլեկտրոնային առևտրի, Մաքսային տարանցման, Թվային մաքսային համակարգի, Մաքսային - Նավահանգիստ համագործակցության, Ապրանքների ծագման, Կանաչ մաքսատան հայեցակարգի, Ուղևորահոսքի պարզեցման ու հսկողության, Մաքսային գործընթացների և առևտրի դյուրացման, SIGMAT համակարգի կիրառման, ինչպես նաև Մաքսային և արդյունաբերական ոլորտների ճկունության ամրապնդմանն առնչվող թեմաներով: Նիստին քննարկվել է նաև ՀՄԿ 2023-2025 թթ աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև CliKC! էլեկտրոնային ուսուցման համակարգը:

Համաշխարհային մաքսային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանի մաքսային ղեկավարների համաժողովի ընթացքում քննարկվել են ՀՄԿ արդիականացման ծրագիրը, Ֆինանսական և աուդիտի հանձնաժողովների հաշվետվությունները, Տարածաշրջանային կարողությունների զարգացման գրասենյակի զեկույցները, ինչպես նաև ՀՄԿ եվրոպական տարածաշրջանային այլ հարցեր:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Քննարկումների ժամանակ ներկայացվել են մաքսային մարմինների կողմից կիրառվող տեխնոլոգիական նորարարությունները, համաշխարհային առևտրի աջակցության հարթակը,

մաքսային տվյալների փոխանակման, էլեկտրոնային առևտրի շրջանակներում նախնական տեղեկատվության ու ռիսկերի կառավարման, առևտրի պարզեցման և տարբեր սուբյեկտների հետ համագործակցության միջազգային փորձը:

Նիստին քննարկման է արժանացել նաև 2023 թվականի դեկտեմբերին Իտալիայում տեղի ունեցած ՀՄԿ քաղաքականության հարցերով հանձնաժողովի նիստի ընթացքում ստորագրված «Խելացի մաքսային համակարգ» ծրագրի ներդրման համագործակցության համաձայնագիրը, որը նպատակ ունի բացահայտել մասնակից երկրներում առկա իրավիճակը և կարիքները, նպաստել մաքսային ոլորտում տեխնոլոգիական և նորարարական լուծումների կիրառմանը: Նախագիծը մասնակիցներին կտրամադրի տեղեկատվություն բիզնես գործընթացների, քաղաքական մեխանիզմների, իրավական պահանջների, նվազագույն տեխնիկական բնութագրերի (իրականացման/ինտեգրման համար), հնարավոր ծախսերի և համապատասխան տեխնոլոգիաների հետ կապված միտումների մասին:

Միաժամանակ, նստաշրջանի ընթացքում Բրազիլիայի ներկայացուցիչը ներկայացրել է էլեկտրոնային առևտրի պաշտպանվածության ու անվտանգության ազգային փորձը:

Համաշխարհային մաքսային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանի մաքսային ղեկավարների համաժողովի ընթացքում ներկայացվել է Եվրոպական տարածաշրջանային կապի օպերատիվ-հետախուզական բաժանմունքներից յուրաքանչյուրի (RILO CIS, RILO AP, RILO WE) գործունեության մասին, Կարողությունների զարգացման տարածաշրջանային գրասենյակի՝ նախորդ տարվա ընթացքում իր գործունեության, ինչպես նաև առաջիկա տարվա համար նախատեսված միջոցառումների մասին: Կատարվել են 2024-2025 թվականների բյուջեի կանխատեսումներ, տեղի է ունեցել ՀՄԿ Խորհրդի և քաղաքական կոմիտեի օրակարգերի ձևավորմանն ուղղված հարցերի քննարկում:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Վերը նշված թեմաների շրջանակներում Կոմիտեն մի շարք փաստաթղթերի հետագա ընթացքի ապահովմանը հավանություն է տվել (Տվյալների մոդելի մշակման աշխատանքներ, Թվային մաքսային համակարգ, Մաքսային–արդյունաբերություն փոխգործակցության ամրապնդում, ՀՄԿ-Համաշխարհային փոստային միություն համագործակցություն), իսկ որոշ

փաստաթղթեր ընդունվել են ի գիտություն (ԱՀԿ Առևտրի դյուրացման համաձայնագրի զարգացումները, Էլեկտրոնային առևտրի ոլորտում զարգացումներ, Ուղևորահոսքի պարզեցման ու հսկողությանն ուղղված աշխատանքներ, Մեկ պատուհան համակարգ, Բացթողնման ժամանակի ուսումնասիրություն, Կանաչ մաքսատուն, Կիոտոյի վերանայված կոնվենցիայի փոփոխություններ, ՀՄԿ քաղաքականության կոմիտեի աշխատանքների ընթացքի մասին զեկույց, Ոչ ինտրյուսիվ զննման տեխնիկական փորձագետների խումբի հանդիպման արձանագրությունը, ինչպես նաև Ուղևորահոսքի պարզեցման ու հսկողության հարցերով աշխատանքային խմբի և Ստամբուլյան կոնվենցիայի վարչական կոմիտեի նիստի հաշվետվությունները:

Նիստի ժամանակ տեղի է ունեցել 2024-2025 թթ. ֆինանսական տարվա համար Կոմիտեի նախագահի և փոխնախագահի ընտրությունը:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Հանդիպումների ժամանակ ՀՄԿ ստանդարտների ու գործիքների փոփոխությունների մասով ստացված տեղեկատվությունը կկիրառվի մաքսային վարչարարության բարելավման շրջանակներում: Միաժամանակ, Մշտական տեխնիկական կոմիտեի կողմից հավանության արժանացած փաստաթղթերը ներկայացվելու են ՀՄԿ խորհրդի հաստատմանը, որին ևս Հայաստանը կմասնակցի:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Սոսե Ստեփանյան

**06.05.2024թ**